

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-147-13.11.2012-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծի ընդունման հիմնավորումից պարզ չէ, թե նախագծի նպատակը գործատուներին կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, թե ֆոնդ հիմնադրելու հնարավորության ընձեռումն է:

Եթե խոսքը վերաբերում է ֆոնդի կառավարչի ստեղծմանը, ապա կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափի սահմանումն այդ շուկա մուտք գործելու կարևոր պահանջ է և ֆոնդի կառավարչի ֆինանսական կայունության նվազագույն երաշխիք է, ինչպես նաև ընկերության գործունե-

ության ընթացքում առաջացող ռիսկերի բացասական հետևանքներին դիմակայելու միջոց: Հայաստանի հետ համադրելի երկրների փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կապիտալի նկատմամբ պահանջներն ավելի մեղմ չեն, քան «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները: Մասնավորապես, Էստոնիայում կապիտալի նվազագույն չափը կամավոր կենսաթոշակային ֆոնդերի համար կազմում է 730 հազ. եվրո, իսկ պարտադիր ֆոնդերի կառավարիչների համար՝ 3 մլն եվրո: Սերբիայում նույն ցուցանիշը կազմում է 1 մլն եվրո: Իսկ, օրինակ, Լատինական Ամերիկայի երկրներում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կապիտալի նվազագույն չափը տատանվում է 0,5-ից մինչև 4 մլն ԱՄՆ-ի դոլարի սահմաններում: Բացի դրանից, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի համաձայն, գործատուին արգելվում է իր աշխատակիցներին լրացուցիչ (կորպորատիվ) կենսաթոշակներ տրամադրելու նպատակով կամավոր կենսաթոշակային սխեմաների ձեռքբերման պայմանագիր կնքել իր հետ փոխկապակցված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ: Այսինքն, անգամ ավելի ցածր կանոնադրական կապիտալի պահանջի դեպքում, գործատուն սահմանափակված կլիներ իր աշխատակիցներին սպասարկող կառավարիչ ստեղծելու հարցում:

Եթե խոսքը վերաբերում է գործատուների կողմից ֆոնդի ստեղծմանը, ապա նախագծով առաջարկվող փոփոխությունները բարձրացված խնդրի հետ չեն առնչվում, քանի որ փոփոխվող հոդվածը վերաբերում է միայն ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալին: Մինչդեռ, ֆոնդ ստեղծելու համար օրենսդրությամբ սահմանված են առավել մեղմ պահանջներ, քան ֆոնդի կառավարիչների համար, ինչը նախագծի հիմնավորման մեջ նշված գործատուներին չի խոչընդոտում իրենց աշխատակիցների համար ստեղծել համապատասխան ֆոնդեր:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ  
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի վերաբերյալ**

««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Եզրակացություն**

**«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական  
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի չեզոք ազդեցություն,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի չեզոք ազդեցություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կանոնադրական կապիտալի նվազագույն շեմը իջեցնելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ուղղված է *կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների լուծմանը*:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## **ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

### **«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1.«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է նվազեցնել կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափը: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը հինգ հարյուր միլիոն դրամի փոխարեն սահմանել հարյուր միլիոն դրամ, իսկ կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար՝ երկու հարյուր միլիոն դրամի փոխարեն հիսուն միլիոն դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Պ-147-13.11.2012-ՍՀ-010/0

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Սույն օրենքը կարգավորում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կանոնադրական կապիտալի մեծությունը:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետության «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի Հոդված 30-ում «հինգ հարյուր» եւ «երկու հարյուր» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուր» եւ «հիսուն» բառերով:

### **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Կուտակային կենսաթոշակների մասին օրենքը ունի շատ վիճելի հոդվածներ: Դրանցից մեկն էլ հոդվածն 30-ն է՝ Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի վերաբերյալ: Վերջինիս համաձայն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար կանոնադրական կապիտալի նվազագույն շեմ է ճանաչվել հինգ հարյուր մլն դրամը, իսկ կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար՝ երկու հարյուր մլն դրամ սահմանը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ ձեռնարկություններ, կազմակերպություններ, հաստատություններ, որոնք ունեն մի քանի հարյուրից մինչեւ մի քանի հազար աշխատակից կուզենային բացել այնպիսի հիմնադրամ, որը առավելագույնս կիրացներ նրանց կորպորատիվ շահը. մի քանի հազար աշխատող ունեցող համակարգը, ինչպես ցույց է տալիս արտասահմանի փորձը, ուզում է ձեւավորել մեկ միասնական ֆոնդ: Սա շահավետ է նաեւ հասարակության համար, քանի որ ստեղծվում են լրացուցիչ աշխատատեղեր: Սակայն հինգ հարյուր մլն դրամի շեմի առկայությունը գործնականում անհնարին է դարձնում փոքր բիզնեսի գործունեությունը ոլորտում: Նման մեծության կանոնադրական կապիտալ կարող են ձեւավորել նվազագույն թվով սուբյեկտներ, ինչի արդյունքում մեծ մասը ստիպված է լինելու դիմել իրենց կենսաթոշակային ֆոնդերի կառավարչի ծառայություններին: Ստացվելու է, որ ստեղծում են պետությանը հաճո մի քանի ֆոնդերից բաղկացած համակարգ, որտեղ մարդկանց նշանակումները լինելու են իշխանությունների՝ Կենտրոնական բանկի կողմից: Բացի այդ, օրենքում նման թվերով պահանջների առկայության դեպքում անհնարին է լինելու փոքր բիզնեսի մուտքը կենսաթոշակային ապահովագրական ոլորտ: